
**ԲԱՔԻԻ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳԻՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ
ՊԱՀՎՈՂ N 321 ՁԵՌԱԳԻՐԸ**

Մահմուդ Աբդուլբաքին (Բաքի - 1526-1600 թթ.) օսմանյան դասական գրականության ամենաականավոր ներկայացուցիչն է: Ռումի (իմա՝ օսմանյան) պոետների սուլթան ("Sultân-ı Şâirân-ı Memalik-i Rûm'dur") Բաքին ծնվել է Ստամբուլում, Մեհմեդ անունով մի աղքատ մուեզզինի ընտանիքում, սովորել է մեղրեսեում¹: Ուսումնառության տարիներին Աբդուլբաքին հանդիպում է ժամանակի հայտնի բանաստեղծ Ջաթիին, որը կարևոր դեր է կատարում նրա հետագա ճակատագրում²: 1554 թ. Բաքին պարսկական արշավանքից վերադարձած Սուլթան Սուլեյման Քանունիին (1520-1566 թթ.) է ձռնում մի քսաիդ՝ արժանանալով բացառիկ բարեհաճության: Այս ծանոթությունից հետո շարունակական են դառնում սուլթանի և բանաստեղծի միջև քսաիդներ փոխանակելն ու նազիրներ գրելը: Սուլթան Սուլեյմանի մահից անմիջապես հետո Բաքին գրում է իր հայտնի էլեգիան, որը կարևոր տեղ է զբաղեցնում բանաստեղծի դիվանում: Սելիմ Երկրորդ (1566-1574 թթ.) և Սուրադ Երրորդ (1574-1595 թթ.) սուլթանների օրոք Բաքին շարունակում է ստեղծագործել և միննույն ժամանակ ստանձնում է քաղիի, քաղիասքերիի պաշտոնները, սակայն այդպես էլ չի իրականանում նրա՝ շեյխուլիսլամ դառնալու երազանքը³:

Սուլթան Սուլեյման Քանունիի հորդորով գրի է առնվում Բաքիի դիվանը, որը հետագայում լրացվում է նորանոր քսաիդներով, քրթաներով և գազելներով: Որոշ հետազոտողների կարծիքով, «Դիվանում» բացակայում է սուֆիզմը, և այստեղ տեղ չեն գտել «թեվհիդ»-ը ("tevhid"⁴),

¹ Բաքիի մասին հսկայածավալ գրականությունից մասնավորապես տե՛ս **Köprülü Fuad M.** Edebiyat Araştırmaları N 2, Akçağ yayınları, 2. Baskı, Ankara, 2004, s. 468-486, **Çavuşoğlu M.** Bâki ve Divanından Örnekler, Kitabevi 158, İstanbul, 2001, s. 7, Gökyay Or. Ş., "Şâir Bakî Gençliğinde Saraç Çıraklığı Yaptı mı?", JTS, III, 1979, s. 125-133.

² Կենսագիրներ Լաթիֆին և Հասան Չելերին այսպես են ներկայացնում Ջաթիի հետ երիտասարդ բանաստեղծի առաջին հանդիպումը. «Երբ Բաքին Ջաթիին է ընթերցում իր գազելներից մեկը՝ «Բաբախող սրտիս մեջ է գեղեցկուհու մասին կարոտագին մի միտք, որը նման է հայելու մեջ ընկած արտացոլանքին», նա չհավատաց, որ այս բանաստեղծությունը Բաքիի գրածն է և սկսեց խրատել նրան: Երկրորդ այցելության ժամանակ «Եթե ուզում ես վարդերով լի վայր, ահա գինետուն (Եթե անհրաժեշտ է ժպտացող վարդ, ահա առիթ)» տողերով սկսվող գազելով կարողացավ հավաստիացնել ուսուցչին, որ իր գրածներն են, և նույնիսկ գազելներից մեկը Ջաթին ամբողջացրեց և զետեղեց իր դիվանի մեջ՝ նշելով, որ Բաքիի նման բանաստեղծից բանաստեղծություն ստանալը ամոթալի չէ...» (այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Latîfî. Tezkire –i Şuara** (Библиотека Восточного факультета СПбГУ, рукопись N Ms 0937, л. 12a-126), նաև **Hasan Çelebi**, Tezkirettiş- Şuara, Yayımlayan İbrahim Kutluk, Ankara, 1978, C. I., s. 199-200.

³ **İpekten H.** Bâki, Hayatı, Sanatı, Eserleri, Akçağ yayınları, 3. Baskı, Ankara, 1998, s. 13-21.

⁴ *Tevhid* - հիմնականում գրվել է քսաիդի ժանրով, բառացի նշանակում է միավորվել, ունի Աստծո հետ միավորվելու և Աստծուն մեծարելու բովանդակություն: Այդ մասին մանրամասն տե՛ս **Pala İ.** Ansiklopedik Divân Şiiri Sözlüğü, İstanbul, Kapı Yayınları, 2004, s. 258.

«մյունաաջաաթը» (“münāacaāt”⁵)⁶ : Խոսելով Բաքիի դերի մասին՝ հարկ է նշել, որ նա դասակարգել է տաղաչափությունը, փորձել է դուրս գալ ավանդական կաղապարներից՝ արաբապարսկական բարդ տարրերի հետ երբեմն կիրառելով Ստամբուլի ժողովրդախոսակցական լեզուն⁷։ Նրա դիվանից վերցված շատ տողեր դարձել են առածներ - ասացվածքներ։ Հետագայում՝ XVII-XVIII դդ., Բաքիի օրինակին են հետևել նաև օսմանյան դիվանի գրականության ներկայացուցիչներ Շեյխուլիսլամ Յահյան⁸, Նեդիմ⁹ և ուրիշներ¹⁰։

Բաքիի ստեղծագործություններում երևան են գալիս քննադատական տարրեր՝ հաճախ գուգակցվելով երգիծական երանգներով¹¹։ Նա իր բանաստեղծություններում հաճախ սրամտում, ծաղրում էր սին սուֆիներին, գովերգում հասարակ մարդուն, նրա աշխատասիրությունը։ Բաքին գրականագետների կողմից որակվել է նաև որպես «ոհնդ» (խենթ) բանաստեղծ, քանզի իր ստեղծագործություններում կյանքը գնահատել է որպես անցողիկ մի երևույթ՝ խորհուրդ տալով վայելել յուրաքանչյուր րոպեն, օգտվել կյանքի հաճույքներից, բայց չկարևորել նյութականը։

Բաքիի ստեղծագործական ժառանգությունը չափազանց բարձր է գնահատվել միջնադարյան օսմանյան թեզքերներում¹²։ XX դ. թուրք-ազգայնական գաղափարախոսներն ու գրականագետները, խոսելով օսմանյան միջնադարյան գրականության մասին, հետևողականորեն ընդգծում են պարսկական պոեզիայի հզոր ազդեցության ֆենոմենը, անջրպետը պալատի, մեդրեսեի ու հասարակ ժողովրդի միջև՝

⁵ Münāacaāt – բառացի նշանակում է աղերսանք, աղոթք առ Աստված։ Գրվել է քասիդի, մեսնեվիի, գազելի և քրթայի ժանրերով (այդ մասին տե՛ս İpekten H., նշվ. աշխ., էջ 45)։

⁶ Kudret C. Divan Şiirinde Üç Büyükle 2. Baki, 4. Basım, İstanbul, İnkilâp Kitabevi, 1985, s. 13.

⁷ Մանրամասն տե՛ս Սարգսյան Ա., Բաքիի ստեղծագործությունների լեզվի որոշ առանձնահատկությունների շուրջ (Դրան-Նամե -Արևելագիտական հանդես, Ե., 2010-2011, N 42-43, էջ 87-91)։

⁸ Յահյա (1561-1644) – ծնվել է Ստամբուլում, հայտնի ստեղծագործություններն են «Դիվանը», որն առաջին անգամ 1918 թ. հրատարակվել է Ստամբուլում Իբն'ուլ Էմին Մահմուդ Քեմալի կողմից և "Sâkinâme"-ն, որը 77 բեյթից բաղկացած մեսնեվի է։ Յահյայի մասին մանրամասն տե՛ս Refik A. (Altınay), Alimler ve Sanatkârlar, 1. Baskı, İstanbul, 1924, s.181-205; Banarlı N. S. Resimli Türk Edebiyatı, Cilt II, İstanbul, Doğan Ofset A.s., 2004, s. 661-663.


⁹ Նեդիմ Ահմեդ (1681-1730) – ծնվել է Ստամբուլում։ «Դիվանը» տպագրվել է 1924 թ. Ստամբուլում, Հալիլ Նիհադի կողմից։ Նեդիմի մասին մանրամասն տե՛ս Banarlı N. S., նշվ. աշխ., էջ 753-765։

¹⁰ Kudret C. նշվ. աշխ., էջ 13։

¹¹ Боролина И. В. Из старой турецкой поэзии, М., 1978, с. 159; Маштакова Е. И. Из истории сатиры и юмора в турецкой литературе (XIV-XVII веках), М., 1972, с. 105.

¹² St' u Latifi, նշվ. աշխ., 12ա-12բ, Hasan Çelebi Tezkirettiş- Şuara. Yayınlayan İbrahim Kutluk, C. I., Ankara, 1978, s. 199, Bağdatlı Ahdî, Gülşen-i Şuarâ, Yayına Hazırlayan Süleyman Solmaz, Denizli, 2009, s. 67-69, Սարգսյան Ա., Բաքիի ստեղծագործությունների ուսումնասիրության պատմությունից (Orientalia, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, պր. 12, Դրանագիտական կովկասյան կենտրոն, Ե., 2011, էջ 47-55)։

դրանում էլ տեսնելով, այսպես կոչված, «դիվանի գրականության» անկման հիմնական պատճառը¹³:



¹³ Թուրք ազգայնական գրականագիտության կողմից օսմանյան դասական գրականությունը տրված գնահատականների, մասնավորապես պարսկական միջնադարյան գրականության ազդեցության մասին տե՛ս Gökalp Z. Türkçülüğün Esasları, Dördüncü Basılış, Varlık Yayınevi, sayı 825, İstanbul, 1961, s. 24, 96, Köprülü M. F. Türk Edebiyatı Tarihi, İstanbul, Ötüken Yayınları, 1986, s. 117-118, նաև՝ Մաֆարյան Ա., Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Ե., 2012, էջ 97-100, 103-106:

Արևմտյան հետազոտողների ուշադրությունը սեռվում է Բաքիի դիվանի վրա դեռևս XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին: Այսպես, օրինակ՝ 1825 թ. Վիեննայում լույս է տեսնում ավստրիացի հռչակավոր արևելագետ Յ. ֆոն Համմերի «Բաքիի դիվանի» գերմաներեն թարգմանությունը՝ որոշ կրճատումներով¹⁴: 1901 թ. Վաշինգտոնում հրատարակվում է Հ. Ա. Ռ. Գիբբի «Օսմանյան գրականություն. Թուրքիայի պոետներն ու պոեզիան» մենագրությունը, որտեղ հեղինակը անդրադարձել է օսման-յան «դիվանի գրականության» առանձնահատկություններին, անգլերեն թարգմանությամբ ներկայացրել նաև հատվածներ Բաքիի ստեղծագործություններից¹⁵: Բաքիի դիվանը հրատարակվել է 1908 թ. և 1911 թ. Լեյդենում Ռ. Դվորժակի¹⁶ և 1926 թ. Պրահայում՝ Յան Ռիպկայի կողմից¹⁷: Այս հրատարակությունները հատուկ կարևորել են ռուսաստանյան ու խորհրդային Միության առաջատար օսմանագետներ, մասնավորապես օսմանագիտության մոսկովյան դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Վ. Գորդլևսկին¹⁸, ինչպես նաև Ա. Կրիմսկին¹⁹, Վ. Սմիրնովը²⁰, Վ. Գարբուզովան²¹, Ի. Բորովինան²², Ե. Մաշտակովան²³:

Բաքիի դիվանին անդրադարձել է նաև իտալացի արևելագետ Ալ. Բոմբաչին՝ թուրքագետներին քաջածանոթ «Թուրքական գրականության պատմությունը» վերնագրով իր աշխատության մեջ²⁴:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Մուհամմեդ Աբդուլբաքիի օսմաներեն դիվանի մի նմուշ (ձեռագիր N 321), որը թեև ականավոր իրանագետ և օսմանագետ, պրոֆեսոր Հակոբ Փափազյանի կողմից հստակ ու համառոտ նկարագրվել է համապատասխան ձեռագրացուցակում²⁵, սակայն, որպես կանոն, վրիպել

¹⁴ Hammer von Joseph. *Baḫi's des größten türfichen Lirifers*, Diwan, Wien, 1825.

¹⁵ Gibb E. J. W. *Ottoman literature. The Poets and the Poetry of Turkey*, M. Walter Dunne, Publisher, Washington & London, National University, Washington, D. C. 1901, p. 351.

¹⁶ Dvorak R. *Baki's Diwan, Ghazalijāt*, Buchhandlung und Druckerei, vormals E. J. Brill, Leiden, 1908 /1911 2er Band, svii.-p. 210.

¹⁷ Rypka J. *Báqi als Ghazaldichter*, Nakladem Filosofické Fakulty University Karlovy V Komisi Fr. Řivnáče, Knihkupce Karlovy University, Praze, 1926.

¹⁸ Ск и Гордлевский В. А. *Избранные сочинения*, т. IV (Этнография, история востоковедение, рецензии), М., 1968, с. 472-473.

¹⁹ Крымского А. *История Турции и ея литературы от расцвета до начала упадка* (Труды по востоковедению, издаваемые Лазаревским Институтом восточных языков, выпуск XXIX И I-й, М., 1910, с. 141-146).

²⁰ Смирнов В. Д. *Очерк истории турецкой литературы*, СПб., 1891, с. 53-56.

²¹ Гарбузова В. С. *Поэты средневековой Турции. Учебное пособие*, Л., 1963, с. 10.

²² Боролина И. В., նշվ. աշխ., էջ 111-171: Боролина И. В., Никитина В. Б., Левковская Р. Г., Фильштинский И. М. *Литература Востока в средние века*, т. 2, М., 1970, с. 421-425.

²³ Маштакова Е. И. նշվ. աշխ., էջ 278:

²⁴ Bombaci Al. *Storia Della Letteratura Turca, dall'antico impero di Mongolia all'odierna Turchia*, Nuova Accademia Editrice, Milano, 1956, p. 337-346.

²⁵ Արաբական, պարսկական ադրբեջանական և ուրբեկական ձեռագրերի 4-րդ մատյանում համար 321 ձեռագիրը նկարագրված է. «Բազի բանաստեղծի երկերը, թերթեր՝ 125, մեծություն՝ 18 x 9, նյութ՝ թուղթ, մեջքը՝ սև կաշի, կազմի ներքին կողմը՝ նարնջագույն, և կանաչ արծաթանախշ թղթից, գրություն՝ չափածո, երկսյուն, դատարկ թղթերը՝ 4, տողերը՝ 17, գծեր՝ 4՝ 1 ոսկի և 3 սև թանաք, գիրը՝

է մասնագետների ուշադրությունից, երբեմն էլ գիտական հրապարակումներում սխալմամբ որակվել է որպես պարսկերեն²⁶:

Բաքիի երևանյան ձեռագիրը, ըստ հիշատակարանի (126ա), գրվել է հիջրի 1016 թ. լուսնային օրացույցի շաբան ամսին (1607 թ. նոյեմբեր/դեկտեմբեր), Ստամբուլում: Գրիչը՝ Հասան բին Մուհամմադ: Ձեռագրի մեծությունը՝ 10,5x19է, գրությունը՝ երկայուն՝ առնված երեք սև և մեկ ռսկի շրջանակների մեջ (7x15): Ձեռագրատեսակը՝ նասյալիկ, ունի նաև ճակատագարդ մանրանկարչություն (1բ): Ձեռագիրը բաղկացած է 126ա թերթից, որտեղ տեղ են գտել քասիդներ, մուսամթներ, գազելներ և քըթաներ: Հետագա հիշատակարանի համաձայն էլ (1ա) 1247 թ. լուսնային օրացույցի մուհարրեմ ամսից (1831 թ. հունիս/հուլիս) ձեռագրի սեփականատերն է եղել Հովհաննես Ամիդին (Ամդի):

Մաշտոցյան Մատենադարանում պահվող և մեր սույն համեստ հաղորդման մեջ նկարագրված Մուհամմեդ Աբդուլբաքիի ձեռագիր-դիվանը հիրավի բացառիկ արժեք է օսմանագետների, միջնադարագետների, ձեռագրագետների, արվեստաբանների համար և, անշուշտ, դեռ բազմիցս արժանանալու է մասնագիտական բազմակողմանի քննության:

ՄԱՐԳՍՅԱՆ Ա. Հ.

ՄԵԼԻՔՅԱՆ Գ. Վ.

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՍԱՖԱՐՅԱՆ Ա. Վ.

Պատմական գիտությունների թեկնածու

թյուրքերեն (օսմանյան) զարդագրությունը՝ մուտքը՝ խորան, գունագարդ, գրիչ՝ Հասան իբնե Մուհամմադ, ստացող Հովհաննես Ամդի, ժամանակ՝ 1016 հիջրի (1607 թ.) և բովանդակությունը, թյուրք բանաստեղծ Բագի-ի երկերը (դիվանը) բանաստեղծություններ, քառյակներ, գազելներ (տե՛ս Յուզակ արաբական, պարսկական աղբյուրների և ուզբեկական ձեռագրերի, 4-րդ մատյան (ձեռագիր), Ե., 1948, ՀՄՄՈ, Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատուն, Մատենադարան, թերթ 18բ -19ա):

²⁶ Տե՛ս Амирбемян Р. Каллиграфия и миниатюра Востока (Коллекция Матенадарана). Альбом, Е., 2012, с. 62, 92, 269.